ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«10» մարտի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բաղալյանը:
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 24 (քսանչորս) անդամներ՝
Ս.Բալասանյանը, Հ.Կարապետյանը, Ա.Ադամյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Հունանյանը, Ա.Գրիգորյանը, Գ.Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Տ.Փանոսյանը, Ա.Խաչատրյանը, Ռ.Սարգսյանը, Ա.Աղանյանը, Ա.Մխիթարյանը, Ս.Մարտիրոսյան, Հ.Եղիազարյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ. Պողոսյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բաղալյանը:
Նիստին հրավիրված են և մասնակցում են՝ համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, համայնքային ենթակայության կառույցների տնօրեններ, ինչպես նաև ՀԼՄ-ների, ՀԿ-ների ներկայացուցիչներ և քաղաքացիներ:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.
Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 234-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 234-Ն որոշման(այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1–ին կետի 1-ին ենթակետի «4 410 454 500 (չորս միլիարդ չորս հարյուր տաս միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «4 653 970 500 (չորս միլիարդ վեց հարյուր հիսուներեք միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «4 978 455 300 (չորս միլիարդ ինը հարյուր յոթանասունութ միլիոն չորս հարյուր հիսունհինգ հազար երեք հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «5 221 971 300 (հինգ միլիարդ երկու հարյուր քսանմեկ միլիոն ինը հարյուր յոթանասունմեկ հազար երեք հարյուր)» թվով և բառերով:

2. Բյուջեի հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համապատասխանաբար NN 1,2,3,4, հավելվածների:

4. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն NN 1-5 հավելվածների:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշման հրապարակումը՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

Համայնքի ավագանու անդամ Արման Գրիգորյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի երրորդ հարցից:

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 221-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հաստատել՝

1) Կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը ըստ ոլորտների.

ա. մշակույթային՝ թվով 19 (տասնինը) համաձայն NN 1-19 հավելվածների,
բ. սպորտային՝ թվով 15 (տասնհինգ) համաձայն NN 20-34 հավելվածների,
գ. նախադպրոցական՝ թվով 24 (քսանչորս) համաձայն NN 35-58 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 11-ի N 183-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 221-Ա որոշումը:
3. Կազմակերպությունների տարիֆիկացիաների հաստատումը վերապահել Գյումրի համայնքի ղեկավարին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 1-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքին, որպես նվիրատվություն, հատկացնել 700 000 (յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2020 թվականին նախատեսված բազմաբնույթ գրական միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու և իրականացնելու համար:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 23 (ՔՍԱՆԵՐԵՔ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի թվով 23 (քսաներեք) կազմակերպություններին որպես նվիրատվություն հատկացնել 22 526 100 (քսաներկու միլիոն հինգ հարյուր քսանվեց հազար հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, շենքերի ընթացիկ նորոգման, գույքի, տնտեսական ապրանքների ձեռքբերման և անհրաժեշտ այլ ծախսերի համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 (ԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի թվով 2 (երկու) մարզադպրոցներին որպես նվիրատվություն հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝

1) Գյումրի համայնքի «Արամ Սարգսյանի անվան խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ հանրապետական մրցումներին բասկետբոլի թիմերի մասնակցության անդամավճարները հատկացնելու նպատակով,

2) Գյումրի համայնքի «Ալեքսան Հակոբյանի անվան թենիսի և սեղանի թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ հանրապետական մրցումներին թենիսի թիմերի մասնակցության անդամավճարները հատկացնելու նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 11 (ՏԱՍՆՄԵԿ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի թվով 4 (չորս) կազմակերպությունների, որպես սուբսիդիա **788 000** (յոթ հարյուր ութսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և թվով 7 (յոթ) կազմակերպությունների, որպես նվիրատվություն **6 360 400** (վեց միլիոն երեք հարյուր վաթսուն հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, գործիքների լարելու, ձեռքբերման, ընթացիկ վերանորոգաման, օդամղիչ փամփուշտների ձեռքբերման և անհրաժեշտ այլ ծախսերի համար հատկացնել դրամական միջոցներ ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/1/1 և 8/2/3 գործառական դասակարգման (4511) «Սուբսիդիաներ համայնքային կազմակերպություններին» և (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածներից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԷՅԼԻԹԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի «Էյլիթիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 1 585 600 (մեկ միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, լոկալ ջեռուցում անցկացնելու համար:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՆՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ՝ ԱՌԱՆՑ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ –0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել 3 300 000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, տրանսպորտային միջոցի գնումը կատարելու համար:
2. Թույլատրել իրականացնելու տրանսպորտային միջոցի (ծառայողական մեկ ավտոմեքենայի) անհետաձգելի համարվող գնումը բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնման հայտարարությունը նախապես հրապարակելու և այն իրականացնելու երկրորդային շուկայից:
3. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (5121) «Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 157 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՀԻՍՈՒՆՅՈԹ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ –0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 157 (մեկ հարյուր հիսունյոթ)անձանց կանխիկ հատկացնել 1 920 000 (մեկ միլիոն ինը հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ թույլտվություն Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկին անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելուն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0

ձեռնպահ – 1 (Ա.Գրիգորյան ԳԱԼԱ)

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

Համայնքի ավագանու անդամ Արամայիս Գրիգորյանը քվեարկությանը չմասնակցեց օրակարգի 13-րդ հարցից:

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 3-ՐԴ ՓՈՂՈՑ N 4/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 3-րդ փողոց N 4/1 հասցեում ինքնակամ կառուցված 6,0 (վեց) քառակուսի մետր մակերեսով աստիճանները և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 6,0 (վեց) քառակուսի մետր մակերեսով հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած քաղաքացի Գևորգ Հակոբյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված աստիճանները և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 18000 (տասնութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել գույքի վարձակալության պայմանագիր:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Պարերի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար տարածք վարձակալելուն համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին» N 53-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման 2-րդ կետի «300.000 (երեք հարյուր հազար)» թիվը և բառերը փոխարինել «334.000 (երեք հարյուր երեսունչորս հազար)» թվով և բառերով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 23

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական երրորդ նիստի գումարման օր սահմանել 2020 թվականի ապրիլի 10-ը ժամը 12^{00}-ն:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Լ. Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ.Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ռ. Սարգսյան _____

Ա. Մխիթարյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա.Խաչատրյան _____

Հ. Եղիազարյան _____

Գ. Մաթևոսյան _____

Հ.Պողոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

քաղաք Գյումրի
«10» մարտի 2020 թվական